ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՁԱՅՆԵՂ ՀՊԱԿԱՆՆԵՐԸ
(համաժամանակյա հայեցակետ)

ՎԱՐԴԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հին հայերենի ձայնեղ հպականների հնչաբանական բնութագրի առնչությամբ հայերենագիտության մեջ արտահայտվել է երեք մոտեցում: Առաջին և մինչև օրս էլ ընդհանուր առմամբ գերակայող տեսակետի համաձայն, որը, ըստ ամենայնի, սկիզբ է առել Հ. Հյուբշմանից, հին հայերենի հպական ձայնեղները՝ *բ* (b), *գ* (g), *դ* (d), սերած լինելով հ.-ե. շնչեղ ձայնեղներից, տեղաշարժի արդյունքում կորցրել էին շնչեղության հատկանիշը՝ վերածվելով պարզերի[1]: Դասական գրաբարի ձայնեղ հպականների համար այս տեսակետը հետևողականորեն պաշտպանող Է. Աղայանը, այնուամենայնիվ, չի բացառել, որ հին հայերենի որոշ բարբառներում նշված հնչույթները կարող էին ունենալ շնչեղացած արտաբերություն, սակայն, նախ՝ այդ հատկանիշը չուներ հնչույթաբանական արժեք, երկրորդ՝ այն հ.-ե. շրջանից անցած իրողություն չէր, այլ հայերենի պատմության ընթացքում առաջացած երևույթ[2]: Հին հայերենի ձայնեղ հպականների հնչարտաբերական բնույթի վերաբերյալ ընդհանուր առմամբ նման կարծիք են հայտնել նաև Գ. Սևակը, Է. Թումանյանը և Ֆ. Կորտլանդը[3]: Երկրորդ տեսակետի համաձայն, որի հեղինակային իրավունքը վերագրվում է Հ. Պեդերսընին[4], հին հայերենի հպական ձայնեղներին բնորոշ էր շնչեղությունը՝ որպես հնչույթաբանական հատկանիշ[5]: Նրա կարծիքով, երբ խուլերը («նրբե-

---

[1] Տե՛ս **Հայնրիխ Հյուբշման**, Հայերենի դիրքը հնդեվրոպական լեզուների շարքում // Հայագիտական ուսումնասիրություններ, Եր., 1990, էջ 60-61:

[2] Տե՛ս **Է. Բ. Աղայան**, Նոր հայերեն բարբառների առաջացման հարցի մասին, ՊԲՀ, 1958, № 1, էջ 211-233, **Агаян Э. Б.** О генезисе армянского консонантизма // «Вопросы языкознания» (այսուհետև՝ ВЯ), 1960, № 4, էջ 37-52, **Է. Բ. Աղայան**, Գրաբարի քերականություն, գ. Ա, Եր., 1964, էջ 148, 154-155:

[3] Տե՛ս **Գուրգեն Սևակ**, Հայ բարբառների ծագման հարցի շուրջը // ՊԲՀ, 1959, № 1 (4), էջ 224-245, **Туманян Э. Г.** Древнеармянский язык, М., 1971, էջ 57-60, **Ֆրեդերիկ Կորտլանդ**, Պատմահամեմատական հնչյունաբանության հարցեր // «Հայոց լեզու և գրականություն», Եր., 1983, պր. 1-2, էջ 69, **Кортланд Ф**. Праиндоевропейские глоттализованные смычные // ВЯ, 1985, № 4, էջ 48:

[4] Տե՛ս **В. Пизани**, Об армянских отражениях индоевропейских взрывных // ВЯ, 1961, № 4, էջ 46, **Է. Բ. Աղայան**, Գրաբարի քերականություն, էջ 148, **Ֆրեդերիկ Կորտլանդ**, Պատմահամեմատական հնչյունաբանության հարցեր, էջ 63, **Кортланд Ф**., Праиндоевропейские глоттализованные смычные, էջ 45-46:

[5] Թեպետև Հ. Պեդերսընը չունի «հնչույթի» և «հնչյունի», «հնչույթաբանականի» և «հնչյունաբանականի» տարբերակում, բայց ակնհայտ է, որ խոսքը շնչեղության՝ որպես

ը») վերածվում են ձայնեղների («միջակների»), իսկ ձայնեղները՝ խուլերի («միջակները նուրբ կ'ըլլան»), այդ երևույթի բացատրության միակ «միջոցն է ընդունիլ, թէ հին հայերէնի այն ձայները՝ որոնք *գ, ձ, դ, բ* գրերով կը գրուին (եւ որոնք ի մէջ այլոց յուն. γ, δ, β ձայները տառադարձելու կը գործածուին), իրապէս անփոփոխ միջակ-թաւերը [իմա՝ շնչեղ ձայնեղները-Վ. Պ.] կը ներկայացնեն, ուրեմն իբր gh, jh, dh, bh (*ջ* տառն ալ ըստ այսմ՝ իբր ǰh) արտաբերելու են»[6]: Այս առումով կարևոր է նաև Հ. Պեդերսընի հետևյալ միտքը. «*Միայն արդի բարբառները չեն* (ընդգծ. իմն է՝ Վ. Պ.) որ ստիպեն զմեզ ընդունելու թէ հին հայերենի միջակները իրականին միջակ-թաւ էին»[7], այսինքն՝ շնչեղ ձայնեղ: Նշանակում է՝ Հ. Պեդերսընը ևս, ինչպես և հետագա ուսումնասիրողները[8], հին հայերենի հպական ձայնեղներին շնչեղության հատկանիշ է վերագրել նաև այդպիսիք ունեցող արդի բարբառների տվյալների հիման վրա:

Հնարավոր է, որ Հ. Պեդերսընի տեսակետի համար անուղղակի ազդակներ են եղել գերմանացի հնչյունաբան Զ. Զիվերսի և Հ. Աճառյանի դիտարկումները 19-րդ դարավերջի հայկական որոշ բարբառներում շնչեղ ձայնեղների գոյության մասին, որոնցում կարող էր պահպանված լինել հին հայերենի ձայնեղ հպականներին բնորոշ շնչեղության հատկանիշը: Հ. Աճառյանը այդպիսի միտք է հայտնել իր գիտական գործունեության տարբեր շրջաններում գրված աշխատանքներում, մասնավորապես՝ «Հայոց գրերում»[9] և հետմահու հրատարակված «Լիակատար քերականության»[10] մեջ: Այնուհետև. «Հաստատելով, որ հայության մեծագույն մասը թրթռունները հնչում է շնչեղ և հայտնապես Երևանը իր շրջակայքով, մենք ստանում ենք զորեղ երաշխիք, որ *V դարի արտասանությամբ էլ թրթռունները շնչեղ էին*»[11] (ընգծ. իմն է՝ Վ. Պ.): Բայց քանի որ

հնչական միավորի համար հիմնական, այսինքն՝ հնչույթաբանական (=տարբերակիչ/ռելևանտ) հատկանիշի մասին է:

[6] **Հոլգեր Պեդերսըն**, Հայերէն եւ դրացի լեզուները, Վիեննա, 1907, էջ 8: Հմմտ. նաև՝ «.... ըստ ինքեան զարմանալի չէ որ հնդեվ. *gh* կամ *gʷh* մը հայերէնի մէջ տակաւին իբր *gh* մնացած ըլլայ .... » (նույն տեղում, էջ 11): Ուշագրավ է, սակայն, որ կյանքի վերջին շրջանում գրված «Ընդհանուրհնդեվրոպական և նախահնդեվրոպական հպական հնչյունները» ("Die gemeinidoeuropäischen und die vorindoeuropäischen Verschlußlaute", 1951) աշխատության մեջ Հ. Պեդերսընը վերանայում է դարասկզբին արտահայտած այդ կարծիքը (տե՛ս **Семереньи О.** Введение в сравнительное языкознание, М., 1980, էջ 159):

[7] **Հոլգեր Պեդերսըն**, նշվ. աշխ., էջ 10:

[8] Տե՛ս **Фогт Г.** Заметки по армянскому консонантизму, ВЯ, 1961, № 3, էջ 41: Ավելի վաղ այդ խնդրին Հ. Ֆոգտը անդրադարձել էր «Հայերենի հպականները» (հմմտ. **H. Vogt**, Les occlusives de l'arménien, NTS, XVIII, 1958, էջ 143 և հջ.) աշխատության մեջ: Հմմտ. նաև՝ **W. S. Allen**, Phonetics and comparative linguistics //Archivum Linguisticum, 1951, 3, էջ 134, **Бенвенист Э.** Проблемы армянского консонантизма, ВЯ, 1961, № 3, էջ 38: Է. Բենվենիստն այդ մասին գրել էր նաև «Բաղաձայնական տեղաշարժը և ժամանակակից բարբառները» (հմմտ. **E. Benveniste**, La mutation consonantique et les dialects modernes, BSLP, I, 1959, էջ 53) ուսումնասիրության մեջ:

[9] Տե՛ս **Հրաչյա Աճառյան**, Հայոց գրերը, Եր., 1984, էջ 598:

[10] Տե՛ս **Հ. Աճառյան**, Լիակատար քերականություն հայոց լեզվի (այսուհետև՝ ԼՔՀԼ), հ. 6, Եր., 1971, էջ 554:

[11] **Հ. Աճառյան**, ԼՔՀԼ, հ. 6, էջ 554-555:

Հ. Աճառյանը նույնպես չունի հնչույթի և հնչյունի տարբերակումը (ավելի ճիշտ՝ այդ տերմինների նշանակությամբ նա գործածում է «ձայնը»)[12], պարզ չէ, թե շնչեղությանը նա ինչ հատկություն է վերագրում՝ գործառակա՞ն (=հնչույթաբանակա՞ն), թե՞ հավելյալ (=հնչյունաբանական): Այդ առումով, թերևս, Ա. Խաչատրյանը իրավունք ուներ ասելու, որ «… Աճառյանը հետևողական չի եղել այդ հնչյունների իր գնահատականներում …»[13]: Ա. Մեյեն, որ իր «Ակնարկներ …»-ի առաջին հրատարակության մեջ (1903) հին հայերենի ձայնեղ հպականների բնույթի վերաբերյալ նույն տեսակետն ուներ, ինչ և Հ. Հյուբշմանը, շուրջ երկու տասնամյակ անց՝ 1922-ին լույս տեսած «Հնդեվրոպական բարբառները» մենագրության մեջ, վկայակոչելով Հ. Աճառյանին և Հ. Պեդերսընին, «ընդհանուր հայերենի» ձայնեղ հպականներին վերագրում է հնդեվրոպական շնչեղ ձայնեղներին «համեմատելի առանձնահատկություն»: Ըստ այդմ՝ հին հայերենի «ph, th, kh-ին բնորոշ իրողությունները, որոնք նկատել էր Հ. Աճառյանը, հավաստում են *բ, գ, դ*-ով տառադարձված» հնչյունների շնչեղ բնույթը[14]: Հետագայում այս տեսակետը մեկնաբանության երանգային յուրահատկությամբ պաշտպանել են Վ. Ալենը[15], Հ. Ֆոգտը (հմմտ. «… դասական հայերենում գոյություն է ունեցել եռանդամ համակարգ՝ բաղկացած երկու շնչեղներից (ձայնեղ և խուլ), որոնք հակադրվել են չշնչեղացած հնչույթին, ընդ որում՝ վերջինի ձայնեղությունը կամ ձայնեղության բացակայությունը չեն ունեցել ոչ մի հնչույթաբանական արժեք»)[16] Է. Բենվենիստը (հմմտ. «… հին հայերենում պահպանվել էին հնդեվրոպական շնչեղ ձայնեղները … »)[17]: Ավելի վաղ հին հայերենի ձայնեղ հպականների մասին Վ. Ալենը նմանօրինակ կարծիք էր հայտնել Նոր Ջուղայի բարբառի շնչեղ ձայնեղներին բնորոշ մի յուրահատկության հիման վրա, ըստ որի՝ լսողությամբ նրանք խուլ էին, բայց բառամիջի դիրքում և բառավերջում «ձայնեղանում էին»: Դրանք նա բնորոշել է իբրև «ներունակ ձայնեղներ»[18]:

Այդ առումով ավելի հեռուն գնաց Ա. Ղարիբյանը: Հիմք ընդունելով պատմական Հայաստանի արևմտյան և կենտրոնական տարածքի որոշ բարբառներում (I՝ Արաբկիրի, Ակնի, Սեբաստիայի, Շապին-Գարահիսարի, Համշենի, Խարբերդ-Երզնկայի, Առտիալի և II՝ Կարինի, Մուշի, Արարատյան, Դիադին-Բասարգեչարի, Ոզմի, Ջուղայի բարբառախմբերում) շնչեղ ձայնեղ հնչյունների առկայության փաստը, Ա. Ղարիբյա-

---

[12] Տե՛ս նույն տեղը:

[13] **Хачатрян А. А.** Природа звонких придыхательных в армянских диалектах // Միջազգային հայերենագիտական գիտաժողով, Եր., 1984, էջ 328:

[14] Տե՛ս **A. Meillet**, Les dialects indo-européens, Paris, 1950, էջ 12:

[15] Տե՛ս **W. S. Allen**, նշվ. աշխ.:

[16] **Фогт Г.,** նշվ. աշխ.:

[17] **Бенвенист Э.**, նշվ. աշխ.:

[18] **W. S. Allen**, Notes on the Phonetics of an Eastern Armenian Speaker // Transactions of the Philologicial Society of America, 1950, p. 180-206:

նը փորձեց ապացուցել, որ այդ բարբառները արտացոլում են նախագրային հայերենի վիճակը, այսինքն՝ ավելի հին են, քան գրաբարյան հայերենը, որովհետև գրաբարը շնչեղ ձայնեղների կարգ չի տարբերակել[19]: Սակայն, ինչպես տեսանք, հին հայերենում շնչեղ ձայնեղների կարգի հնարավոր գոյությունն ընդունողները նկատի ունեին առաջին հերթին գրական լեզուն՝ գրաբարը: Իհարկե, եթե հնարավոր լինի ապացուցել, որ նշված բարբառներն իրականում գրաբար լեզվից ավելի հին են կամ առնվազն գործառել են նրան զուգահեռ, դրանով կմեծանա հավանականությունը, որ նախագրային հայերենը կարող էր հիմնական գծերով պահպանած լինել ընդհանուրհնդեվրոպական լեզվի հպականների համակարգը: Բայց, ինչպես ցույց է տվել Է. Աղայանը, այդ հարցում պաշտպանելով Հ. Աճառյանի տեսակետը, նշված բարբառների շնչեղ ձայնեղները կարող էին առաջանալ նաև ավելի ուշ՝ պարզ ձայնեղների շնչեղացման ճանապարհով: Այսինքն՝ որքանով որ հնարավոր է «շնչեղ ձայնեղ→պարզ ձայնեղ» անցումը (հմմտ. *b^h>b), նույնքան էլ հնարավոր է հակառակ տիպի անցումը՝ «պարզ ձայնեղ→շնչեղ ձայնեղ» (հմմտ. *b>b^h)[20]:

Հիմնվելով Ա. Ղարիբյանի, Է. Բենվենիստի և Հ. Ֆոգտի կարծիքների վրա՝ հին հայերենում հ.-ե. շնչեղ ձանեղների գոյության և հայերենի բարբառներում դրանց պահպանված լինելու դրույթն ընդհանուր առմամբ ընդունելի են համարել նաև Վ. Գեորգիևը[21], Ֆ. Ֆեյդին[22], Ժ. Ֆուրկեն[23] և Վյաչ. Իվանովը: Վերջինիս կարծիքով, շնչեղ խուլերի կարգի գոյությունը հին հայերենում, ինչպես և հին հնդկերենում, տիպաբանորեն շնչեղ ձայնեղների կարգի առկայության նախադրյալ է, սակայն դա դեռևս հիմքեր չի տալիս խոսելու «ընդհանուրհնդեվրոպականում նույնպիսի հնչույթների գոյության մասին», որովհետև հիմքեր չկան ընդհանուրհնդեվրոպականում շնչեղ խուլերի կարգ կանխադրելու համար: Հայերենում, ինչպես և հին հնդկերենում, շնչեղ ձայնեղների կարգը, ըստ Վյաչ. Իվանովի, նորակազմություն է, զարգացել է հայերենի ինքնուրույն պատմության ընթացքում[24]: Վ. Պիզանին չի բացառել

---

[19] Տե՛ս **Ա. Ս. Ղարիբյան**, Հայ բարբառագիտական հետազոտությունների հիմնական արդյունքները Սովետական Հայաստանում // ՊԲՀ, 1958, № 1, էջ 18-39, **նույնի՝** Հայ բարբառների ծագման հարցի շուրջը // ՊԲՀ, № 3, 1958, էջ 240-266, **նույնի՝** Новая группа диалектов армянского языка // ВЯ, 1958, № 5, էջ 95-101, **Гарибян А. С.** Об армянском консонантизме // ВЯ, 1959, № 5, էջ 81-90, **նույնի՝** Еще раз об армянском консонантизме // ВЯ, 1962, № 2, էջ 18-23:

[20] Տե՛ս **Է. Բ. Աղայան**, Նոր հայերեն բարբառների առաջացման հարցի մասին, էջ 211-233, **Агаян Э. Б.** О генезисе армянского консонантизма, էջ 37-52:

[21] Տե՛ս **Георгиев В. И.** Передвижение смычных согласных в армянском языке и вопросы этногенеза армян, ВЯ, 1960, № 5, էջ 35:

[22] Տե՛ս **Фейди Ф.** Заметки по армянскому консонантизму //ВЯ, 1961, № 5, էջ 47:

[23] Տե՛ս **Жан Фурке**, Генезис системы согласных в армянском языке // ВЯ, 1959, № 6, էջ 68-77:

[24] Տե՛ս **Вяач. В. Иванов**, Об исследовании древнеармянской фонологической системы в ее отношении к индоевропейской // ВЯ, 1962, № 1, էջ 37:

«հայկական շատ բարբառներում հնդեվրոպական ծագման պարզ ձայնեղների և շնչեղ ձայնեղների առկայությունը», բայց դա ինքնաբերաբար չի նշանակում, որ հին (= գրաբարյան) հայերենի *բ, գ, դ* գրերով նշանակված հնչույթներին ևս բնորոշ է եղել շնչեղությունը իբրև հնչույթաբանական հատկանիշ: Նրա կարծիքով, այդ «հարցը բաց է մնում»[25]: Ավելի ուշ վերոհիշյալ կարծիքներին հարում է նաև Հ. Մուրադյանը՝ հին գրական հայերենի ձայնեղ հպականներին բնորոշ համարելով շնչեղությունը որպես հնչույթաբանական հատկանիշ[26]:

Առանձին ուսումնասիրողներ էլ հին հայերենի ձայնեղների համար հնարավոր համարվող շնչեղության հատկանիշի հարցը թողնում են առկախ՝ փաստերի ոչ բավարար լինելու հիմնավորումով[27]:

Բանավեճի առանձին մասնակիցներ, կարևորելով բանավեճի փաստն ինքնին, բավարարվել են երկու հակադիր տեսակետների խոցելի կողմերի վերհանումով[28]: Մասնավորապես, Յան Օտրեմբսկին կասկածելի է համարում, որ միայն մեկ փաստի, այն է՝ որոշ բարբառներում շնչեղ ձայնեղների հնչույթային կարգի առկայության հիման վրա հնարավոր է դատել նրանց՝ գրական լեզվից ավելի հին լինելու մասին[29]:

Նախ՝ հայ բարբառների ծագման հարցի շուրջ ծավալված բանավիճային հոդվածներում, ապա «Ակնարկներ հայերենի նախագրային փուլի պատմության» (1967) աշխատության մեջ Գ. Ջահուկյանը առաջադրում է նոր տեսակետ, որը ոչ միայն կարող է բնորոշվել իբրև նախորդ մոտեցումների «ոսկե միջինը», այլև ամենից հավանականը: Այն է՝ շնչեղությունը ընդհանուր հայերենի (=ինչպես նախագրաբարյան, այնպես էլ գրաբարյան փուլի) ձայնեղ հպականների համար եղել է հնչյունաբանական, բայց ոչ հնչույթաբանական հատկանիշ[30]: Ըստ այդմ, ընդհանուր հայերենի ձայնեղ հպականները գործառել են երկու դիրքային տարբերակներով՝ շնչեղ և ոչ շնչեղ[31]:

---

[25] **Пизани В.** Об армянских отражениях …, էջ 55:

[26] Տե՛ս **Հ. Դ. Մուրադյան**, Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. I, Հնչյունաբանություն, Եր., 1982, էջ 296-297: Հ. Մուրադյանը ևս «հնչույթ» տերմինը չի գործածում, բայց ակնհայտ է, որ խոսքը շնչեղության՝ որպես հնչույթաբանական հատկանիշի մասին է, այլ ոչ թե՝ հնչյունաբանական: Ընդ որում, նրա կարծիքով՝ նախապատմական փուլում նույնպես հայերենի ձայնեղ հպականները եղել են շնչեղ (նույն տեղում, էջ 308):

[27] Տե՛ս **Жан Фурке**, Генезис системы согласных в армянском языке // ВЯ, 1959, № 6, էջ 68-77, **Макаев Э. А.** Передвижение согласных в армянском языке // ВЯ, 1961, № 6, էջ 22-29, **Пизани В.**, նշվ. աշխ., էջ 46:

[28] Տե՛ս **Леман У. Ф.** Об армянской системе смычных и ее соотношение с протоиндоевропейской системой // ВЯ, 1961, № 4, էջ 56, **Заброцкий Л.** Замечания о развитии армянского консонантизма, ВЯ, 1961, № 5, էջ 43:

[29] Տե՛ս **Отрембский Ян**, По поводу армянского консонантизма // ВЯ, 1961, № 3, էջ 45:

[30] Տե՛ս **Գ. Բ. Ջահուկյան**, Հայ բարբառագիտությունը և հայերենի բարբառների ծագման հարցը // ՊԲՀ, 1959, № 2, էջ 282-319, **Джаукян Г. Б.** К вопросу о происхождении консонантизма армянских диалектов // ВЯ, 1960, № 6, էջ 39-49:

[31] Տե՛ս **Джаукян Г. Б.** Очерки по истории дописьменного периода армянского языка, Ер., 1967, էջ 76: Հմմտ. նաև՝ **Գ. Բ. Ջահուկյան**, Հայ բարբառագիտության ներածություն, Եր., 1972, էջ 263:

Հ. Աճառյանը բավականին հիմնավոր ապացուցել է, որ հայերենի աշխարհաբարյան փուլի բարբառները՝ ինչպես արևմտյան, այնպես էլ արևելյան, չէին կարող գրաբարից ավելի հին լինել[32], ուստի այդ հարցը նորովի քննելու անհրաժեշտություն չկա: Սակայն մի բան է բարբառի՝ որպես լեզվի տարածական (համակարգային) միավորի հնության հարցը, այլ բան է՝ բարբառային առանձին իրողությունների (հնչույթաբանական, ձևաբանական և այլն) հնության հարցը: Հին գրական հայերենը, որի հիմքում Այրարատ և Տուրուբերան նահանգների «խոսակցական լեզուներն» էին[33], գրական լեզվի կարգավիճակի է բարձրացել 5-րդ դարից սկսած՝ գրերի գյուտից հետո, երբ ստեղծվեց թարգմանական և ինքնուրույն մեծ գրականություն: Թեպետև հին հայերենից մեզ հասած լեզվական նյութը չի վկայում հօգուտ բարբառային խիստ տարբերակվածության[34], բայց և այնպես տրամաբանական է կարծել, որ նախագրային հայերենը չի եղել խիստ միասնական լեզու, որ տարբեր նահանգների «խոսակցական լեզուները» ունեցել են ինչ-ինչ տարբերություններ, հատկապես՝ հնչյունաբանական և բառապաշարային, որի վկայությունները պահպանվել են մեր որոշ պատմիչների աշխատություններում[35]: Իսկ դրա համար կային բավարար չափով նախադրյալներ, որոնք սովորաբար լեզվի տարածական տարբերակների՝ բարբառների և խոսվածքների առաջացման պատճառ են դառնում: Այդպիսիք էին հարևանների միջև հաճախակի կրկնվող նվաճողական պատերազմները, երկրի տարածական տևական մասնատումները և ազգաբնակչության տրոհված հատվածների՝ տարբեր լեզվական ու մշակութային ազդեցությունների ոլորտում գտնվելը, նշված և այլ պատճառներով պայմանավորված՝ տևական թույլ շփումները ազգաբնակչության տարբեր հատվածների միջև և այլն[36]: Բացի այդ, ըստ «տիպաբանական բնույթի պատկերացումների՝ հնդեվրոպական հին լեզուներում *h*-ի տիպի հնչույթի առկայությունը կամ բացակայությունը» շնչեղ հպականների առկայության/(բացակայության) ցուցիչ է[37]: Այսինքն՝ եթե լեզուն ունի *h* (h) կոկորդային հնչյունը, արդեն իսկ կան շնչեղ հպականների առաջացման նախադրյալներ և ընդհակառակը՝ շնչեղ հնչույթնե-

---

[32] Տե՛ս **Հ. Աճառյան**, Հայոց լեզվի պատմություն, II մաս, Եր., 1953, էջ 114-141, 362-439:

[33] Տե՛ս **Վ. Դ. Առաքելյան**, Ակնարկներ հայոց գրական լեզվի պատմության, Եր., 1981, էջ 60:

[34] Տե՛ս **Հ. Աճառյան**, նշվ. աշխ., **Գ. Բ. Ջահուկյան**, Հայ բարբառագիտության ներածություն, էջ 157-330:

[35] Տե՛ս **Հ. Աճառյան**, նշվ. աշխ.:

[36] Հմմտ. նաև՝ **Գ. Բ. Ջահուկյան**, նշվ. աշխ., էջ 161-162:

[37] **Иванов В. В.** Хеттский язык, М., 1963, с. 86. Հմմտ. նաև. «… որպես կանոն, լեզուները, որոնք տարբերակում են ձայնեղ-խուլ, շնչեղ-ոչ շնչեղ հնչույթներ, ունեն նաև /h/ հնչույթը» (**Якобсон Р.** Типологические исследования и их вклад в сравнительно-историческое языкознание // Новое в лингвистике (այսուհետև՝ НЛ), вып. III, М., 1963, с. 103): Տե՛ս նաև՝ **Вяч. В. Иванов**, Об исследовании древнеармянской фонологической системы в ее отношении к индоевропейской // ВЯ, 1962, № 1, էջ 39-40:

րի առկայությունը վկայում է *h* (h)-ի առկայության մասին: Իսկ այդ հնչույթը եղել է հին հայերենի գրաբարյան փուլում: Տրամաբանական է կարծել, որ եղել է նախագրաբարյան շրջանում, ըստ ամենայնի՝ հ.-ե. նախալեզվից առանձնանալուց հետո հայերենի գոյության ողջ ընթացքում, որքանով որ այն եղել է նաև հ.-ե. այլ լեզուներում (հնդիրանական և խեթալուվական լեզուներ նն) և մեծ արժանահավատությամբ վերականգնվում է ընդհանուրհնդեվրոպականում:

Ձայնեղ հպականների շնչեղությունը հնչույթաբանական հատկանիշ կարող է լինել միայն այն դեպքում, երբ կա *շնչեղություն~ոչ շնչեղություն* հակադրություն (հմմտ. b^h~b, d^h~d և այլն)՝ որպես իմաստատարբերակիչ հատկանիշ: Ենթադրվում է, որ այդպիսի հակադրություն եղել է հայերենի վերոհիշյալ երկու խմբերի բարբառներում (ըստ Ա. Ղարիբյանի հնչյունաբանական դասակարգման), որոնցում տարբերակվում է հպական բաղաձայնների չորս կարգ՝ *շնչեղ ձայնեղ-ձայնեղ-շնչեղ խուլ-խուլ* (հմմտ. $բ^h$(b^h)- բ(b)- փ(p^h)-պ(p)):

Ըստ Ռ. Յակոբսոնի, ընդհանուրհնդեվրոպական լեզվում տիպաբանորեն հավանական չէ հպականների $*b^h$ - *b - *p տիպի եռակարգ համակարգի ընդունումը, որովհետև հայտնի չեն լեզուներ, որոնցում լինի շնչեղ ձայնեղների կարգ՝ շնչեղ խուլերի կարգի բացակայության դեպքում: Փոխարենը շատ են *ձայնեղ-խուլ-շնչեղ խուլ* (հմմտ. *b - *p - $*p^h$) համակարգ ունեցող լեզուները[38]: Եթե չկան հակառակը վկայող փաստեր, Ռ. Յակոբսոնի դրույթի դեմ առարկելը պարզապես անիմաստ է, որովհետև այն փաստական տվյալների տիպաբանական ընդհանրացման արդյունք է: Սակայն որևէ լեզվում շնչեղ ձայնեղների հնչույթային կարգի առկայության համար անհրաժեշտ է ոչ միայն շնչեղ խուլերի, այլև պարզ ձայնեղների հնչույթային կարգի առկայություն (այսինքն՝ <b^h>-ի համար անհրաժեշտ է ոչ միայն <p^h>, այլև՝ <b>), որքանով որ շնչեղ խուլերի կարգի (<p^h>) գոյության համար անհրաժեշտ է հնչույթաբանական հակադրություն ոչ միայն շնչեղ ձայնեղների (b^h), այլև առաջին հերթին հենց պարզ խուլերի կարգի հետ (<p>): Շնչեղ խուլերի հնչույթային կարգի հետ շնչեղ ձայնեղների հակադրությունը կարող է լինել *ձայնեղություն~խլություն* հատկանիշով, իսկ պարզ ձայնեղների հնչույթային կարգի հետ՝ *շնչեղություն~ոչ շնչեղություն* հատկանիշով: Այսինքն՝ միայն պարզ ձայնեղների կարգի հետ հակադրության դեպքում է հնարավոր *շնչեղություն~ոչ շնչեղություն* հատկանիշի իրացումը՝ որպես հնչույթաբանականի: Հետևաբար, շնչեղության հնչույթաբանական հատկանիշի մասին հին հայերենում խոսք կարող է լինել այն դեպքում, եթե դիտարկվեն բառային/ձևույթային զույգեր, որոնցում իմաստի տարբերությունը պայմանավորված է *շնչեղություն~ոչ շնչեղություն* հակադրությամբ: Դասական գրաբարում այդպի-

[38] Տե՛ս **Якобсон Р.,** նշվ. աշխ.:

սի զույգերի գոյությունը հնարավոր չէ, որքանով այդ լեզվում եղել են միայն մեկ տեսակի ձայնեղ հպականներ՝ բ(b), գ(g), դ(d): Եվ եթե նրանց բնորոշ է եղել շնչեղությունը (հմմտ. բ[h], գ[h], դ[h]), ապա միայն որպես հնչյունաբանական, այսինքն՝ ոչ իմաստատարբերակիչ հատկանիշ: Այսինքն՝ հին հայերենը չի ունեցել, օր., [դարձ] և [դʰարձ]՝ որպես երկու տարբեր բառեր: Բացառված չէ, որ ինչպես ընդհանուրհնդեվրոպակա-նում, հին հայերենում ևս ձայնեղ հպականները դրսևորվել են շնչեղ և ոչ շնչեղ դիրքային տարբերակներով, օր.՝ [դ] և [դʰ][39]: Իհարկե, նրանց դիրքային արտաբերության հստակ օրինաչափություն սահմանել հնա-րավոր չէ, որովհետև եթե նույնիսկ այդպիսին ինչ-որ ժամանակ եղել է, ապա համաբանությամբ այն կարող էր տարածվել նաև մյուս դիրքերի վրա, բայց հնարավոր է ցույց տալ դրա միտումները: Ըստ երևույթին, շնչեղ տարբերակներն արտաբերվել են ձայնավորներից առաջ (հմմտ. [արդʰար], [բʰարձր], [գʰեղմն], [դʰարձ] ևն), իսկ ոչ շնչեղները՝ ձայնորդ-ներից առաջ (հմմտ. [ա*գռ*աւ], [*բռ*նակալ], [բʰեր*դ*նորդʰիք] «բերդում պատսպարված՝ ապաստանած», բացառությամբ վերջնահանգ *ն*-ին նախորդող դիրքի (հմմտ. [բʰուր*գ*ն]), և բառավերջում՝ ձայնորդից հետո (հմմտ. [բան*դ*] «բանտ», [բեր*դ*], [նուրբ], [սարդ] «խաչասարդ, մամուկ» ևն): Սակայն, նկատի ունենալով, որ բառավերջի դիրքում հետագայում ձայնեղ հպականները շնչեղ խուլերի վերածվելու հակում են դրսևորել (հմմտ. [բʰեր*դ*]>[բʰեր*թ*], [նուր*բ*]> [նուր*փ*]), պիտի կարծել, որ այդ դիրքը տարբերակային արտաբերության կայունություն չի դրսևորել:

Հայ բարբառագիտության մեջ առանձնացվում են հպական (նաև հպաշփական) շնչեղ ձայնեղների քառակարգ (հմմտ. Արարատյան, Համշենի, Կարնո, Մշո, Նոր Ջուղայի) և եռակարգ (հմմտ. Սեբաստիա-յի, Շապին-Գարահիսարի, Ակնի, Առտիալի, Երզնկայի, Զեյթունի, Հաճ-նի (Հաջնի), Նոր Նախիջևանի) համակարգեր տարբերակող բարբա-ռախմբեր[40]: Նշվածներից, օրինակ, Արարատյան, Համշենի (Մալայի խոսվածք), Մշո, Կարնո, Զեյթունի և Հաճնի բարբառներում հպական շնչեղ ձայնեղները, որոշ բացառություններով, հանդիպում են ինչպես բառասկզբում՝ ձայնավորին նախորդող դիրքում (*բազուկ>բ՝ազուկ, գի-նի>գ՝ ի՛նի, դրախտ>դ՝ըրախտ*,- Ար.), այնպես էլ բառամիջում (հմմտ. *բորբ*, որից՝ արմատի կրկնությամբ՝ *բ՝օրբ՝ընքէ՛լ, դող*, որից՝ արմատի կրկնությամբ՝ *դ՝օղդ՝ըղալ* (Արտ.), *շաբաթ>շաբ՝օթ* (Զթ.), *շաբ՝բ՝օթ* (Հճ.), *այգի>իգ՝ի, մեղադրել>մեղադ՝րել* (ՆՋ), *բամբակ>բ՝ամբագ, հոգևոր>*

[39] Բարբառագիտական ուսումնասիրություններում շնչեղությունը ավելի հաճախ նշանակվում է «՝» նշանով, ուստի մենք ևս համապատասխան աշխատություններից քաղված օրինակները կներկայացնենք այդ կերպ, այլ ոչ թե «ʰ»-ով (հմմտ. բʰ), ինչպես վարվում ենք սովորաբար:

[40] Ըստ Հ. Մուրադյանի՝ հայերենի բարբառներից հպական շնչեղ ձայնեղներ իրա-կանում ունեցել են միայն Արարատյան, Բայազետի, Մշո և Կարնո բարբառները: Ընդ որում, դրանք հանդիպում են միայն բառասկզբի դիրքում (տե՛ս **Հ. Դ. Մուրադյան**, նշվ. աշխ., էջ 284):

հոգ՝էվօր (Սչ.) ևն) *և բառավերջում՝ իհարկե՝ հազվադեպ (հմմտ. գաբ> գ՝օբ՝, ավագ>ավօգ՝, բերդ>բ՝եյդ՝* (Զթ.), *ժառանգ> ժառանգ՝* (Սչ.) ևն): Ակնհայտ է, որ գրեթե բոլոր բարբառներում հին հայերենի ձայնեղները շնչեղանում են հիմնականում բառասկզբի դիրքում. բառամիջում նրանց հանդիպելիությունն էականորեն նվազում է, իսկ բառավերջի դիրքում օրինակները սակավաթիվ են[41]:

Արդ, նշված բարբառներում շնչեղությունը հնչույթաբանակա՞ն հատկանիշ է, թե՞ միայն հնչյունաբանական: Ակնհայտ է, որ բոլոր բարբառագետները, որոնք շնչեղ ձայնեղները դիտարկել են իբրև հպականների ձայնեղ, խուլ և շնչեղ խուլ կարգեր տարբերակող եռակարգ կամ քառակարգ համակարգի լիիրավ անդամ, դրանք համարում են հնչույթներ, անկախ այն բանից, գործածում են «հնչո՞ւյթ», «հնչյո՞ւն», թե՞ «ձայն»[42] տերմինը:

Վերոհիշյալ բարբառների շնչեղ ձայնեղները հնչույթներ համարողները, բացառությամբ Է. Աղայանի և Գ. Ջահուկյանի, հնչույթային տեսության հարցեր չեն քննել, և պարզ չէ, թե նշված բարբառագիտական ուսումնասիրություններում ինչ բովանդակություն է վերագրվում «հնչույթ» տերմինին: Եթե շնչեղ ձայնեղներն ինքնուրույն հնչույթ համարելու չափանիշ է համարվում այդ բարբառները կրողների կողմից ձայնեղների շնչեղ և ոչ շնչեղ տարբերակների (օր.՝ *բ՝*(*բʰ*)-ի և *բ*-ի) ընկալումը՝ որպես հնչարտաբերական առանձին միավորների, ապա դա բավարար չէ այդ հնչյուններին հնչույթային կարգավիճակ վերագրելու համար: Այս հարցի պատասխանը միանշանակ չէ նույնիսկ հնչույթի ոչ գործառական, օր.՝ հոգեբանական (Բոդուեն դը Կուրտենե), ֆիզիկական (Լ. Վ. Շչերբա, Լ. Զինդեր, Դ. Ջոունզ, Ու. Թվոդել, Բ. Բլոկ և ուրիշներ), երկաստիճան (Ս. Շահումյան) և հասարակական (Գ. Ջահուկյան) հայեցակարգերի տեսանկյունից: Անգամ հնչույթի ֆիզիկական, այն է՝ ձայնաբանական-արտաբերական բնութագրերում, որոնցում հնչույթ է համարվում «հնչյունաբանորեն նման հնչյունների կամ հնչյունատիպերի դասը», որի «իրացման և գործառության հիմնական համատեքստը հնչյունական բառն է», չի անտեսվում նրա տարբերակիչ գործառույթը[43]: Հետևաբար, հնչույթը կհամարվի լեզվի նվազագույն միավոր,

---

[41] Օրինակ՝ Մշո բարբառում, ըստ Ա. Գրիգորյանի, «շնչեղ-ձայնեղները գործածվում են միայն բառասկզբում» (**Ա. Վ. Գրիգորյան**, Հայ բարբառագիտության դասընթաց, Եր., 1957, էջ 364):

[42] «Ձայնը» «հնչույթ»/(«հնչյուն») տերմինի նշանակությամբ գործածել է միայն Հ. Աճառյանը, որի համար նրան քննադատել է Գ. Ղափանցյանը, առանց, սակայն, անունը տալու (տե՛ս **Գր. Ղափանցյան**, Ընդհանուր լեզվաբանություն, Եր., 1939, էջ 43, տողտկ.):

[43] Տե՛ս «Общее языкознание (внутренняя структура языка)», М., 1972, էջ 120-193, **Виноградов В. А.** Фонема // Лингвистический энциклопедический словарь (այսուհետև՝ ЛЭС), «Советская энциклопедия», М., 1990, էջ 553: Հմմտ. **Щерба Л. В.** Избранные работы по языкознанию и фонетике, Л., էջ 134, **Зиндер Л. Р.** Общая фонетика, М., 1979, էջ 45-55, **W. F. Twadell**, On defining the phoneme // Language Monograph, № 16, Baltimore, RIL, 1935, **B. Bloch**, A set of Postulates for Phonemic Analysis // Language, 24, 1948, էջ 10, **D. Jones**, An

որը ծառայում է լեզվական նշանի երկու կողմերի՝ նշանակողի (արտահայտության պլան) և նշանակվողի (բովանդակության պլան) տարբերակմանը, թե միայն արտահայտության պլանի տարբերակմանը, երկու դեպքում էլ այն պիտի իրականացնի տարբերակիչ գործառույթ, որի հիմքը հակադրություն ձևավորելն է:

Արդի հայերենի հպական շնչեղ ձայնեղներ ունեցող բարբառների հնչույթային համակարգերը, ըստ վերոհիշյալ հնչույթաբանական սկզբունքների, ներկայացնում են հետևյալ վիճակը. 1) Նշված բարբառներից և ոչ մեկում չկա շնչեղ և ոչ շնչեղ ձայնեղների հակադրություն որևէ դիրքում՝ բառասկզբի, բառամիջի կամ բառավերջի, որն իրականացնում է տարբերակիչ գործառույթ՝ լինի դա հնչաբառի՞, թե՞ բառի՝ որպես երկկողմանի միավորի կազմում: Ավելի պարզ՝ չկա միևնույն հնչյունական միջավայրն ունեցող երկու բառ (կամ ձևույթ), որոնք միմյանցից տարբերվեն *բ‘~բ, գ‘~գ* կամ *դ‘~դ* հակադրությամբ: Այսինքն՝ չկան, օրինակ, *բ‘էրան* «բերան»~*բէրան* «…՞», *գ‘անձ* «գանձ»~*գանձ* «…՞», *դ‘օռ* «դուռ»~*դօռ* «…՞» տիպի հակադրություններ, որոնց երկու եզրերը լինեն տարբեր բառեր: Որպես կանոն, նշված բարբառների մեծ մասում շնչեղ ձայնեղները հանդիպում են միայն բառասկզբի դիրքում, իսկ մյուս դիրքերում հանդիպում են ոչ շնչեղ ձայնեղներ: 2) Թեպետև առանձին բարբառներում (Նոր Ջուղայի, Զեյթունի, Հաճնի) ինչպես շնչեղ, այնպես էլ ոչ շնչեղ ձայնեղները հանդիպում են երեք դիրքրում էլ (իհարկե՝ առավելապես բառասկզբում), որից կարող է տպավորություն ստեղծվել, որ նրանք տարբեր հնչույթներ են, բայցևայնպես այդ դիրքերից և ոչ մեկում ձայնեղների շնչեղությունը տարբերակիչ ուժ չունի. հակադրություն չի ձևավորում, հետևաբար չի իրականացնում հնչույթաբանական գործառույթ: Դա բավարար հիմք է, որպեսզի հայերենի վերոհիշյալ (կարծում ենք՝ նաև մյուս) բարբառներում հանդիպող շնչեղ ձայնեղները համարվեն ոչ շնչեղների դիրքային տարբերակները: Ըստ այդմ, այդ բարբառներն ունեն <Բ(ʰ)>, <Գ(ʰ)>, <Դ(ʰ)> հնչույթներ՝ երկուական ենթահնչույթներով՝ [բʰ/բ], [գʰ/գ], [դʰ/դ]: Եվ սա այն դեպքում, երբ նշված բարբառներում կամ առնվազն դրանց մեծ մասում շնչեղ ձայնեղների հնչույթային կարգի գոյության համար կան տիպաբանական նախադրյալներ, այն է՝ շնչեղ խուլ (փ(pʰ), թ(tʰ), ք(kʰ)) և ոչ շնչեղ ձայնեղ (բ(b), գ(g), դ(d)) հնչույթներ/(հնչյուններ):

Կարծում ենք՝ վերոշարադրյալից հետևում է, որ՝ 1) հայերենի բարբառների հպական բաղաձայնների՝ ավանդականորեն տարբերակվող քառակարգ համակարգերի փոխարեն (հմմտ. Արարատյան, Նոր Ջուղայի, Մշո ևն) կունենանք հպականների եռակարգ՝ *ձայնեղ/(շնչեղ ձայնեղ) ~ խուլ ~ շնչեղ խուլ* հակադրությամբ, իսկ եռակարգերի (հմմտ.

Outline of English Phonetics, Cambridge, 1957, էջ 49-51, **Кубрякова Е. С.** Из истории английского структурализма (Лондонская лингвистическая школа) // Основные направления структурализма, М., 1964, էջ 309-310:

Համշենի, Զեյթունի, Հաճնի, Սեբաստիայի, Նոր Նախիջևանի ևն) փոխարեն՝ երկկարգ (խլազուրկ)՝ *ձայնեղ/(շնչեղ ձայնեղ) ~ շնչեղ խուլ* հակադրությամբ համակարգեր: 2) Եթե նույնիսկ աշխարհաբարյան հայերենի վերոհիշյալ բարբառների շնչեղ ձայնեղ հպականները գալիս են դեռևս նախագրաբարյան փուլից, ինչպես որ պնդել է Ա. Ղարիբյանը, հիմքեր չկան ասելու, որ նախագրաբարյան և գրաբարյան փուլերում դրանք եղել են հայերենի հնչույթային համակարգի լիիրավ անդամներ: Հատկապես որ ընդհանուրինդեվրոպական լեզվի համար նույնպես ոչ բոլոր համեմատաբաններն են ընդունում շնչեղ ձայնեղների կարգավիճակը՝ որպես ոչ շնչեղներից տարբեր հնչույթային կարգի[44]: Բացառված չէ, որ գրաբարյան հայերենում ևս եղել է ձայնեղ հպականների՝ դիրքայնորեն պայմանավորված շնչեղ և ոչ շնչեղ արտաբերություն, հատկապես եթե արդի բարբառների (մասնավորապես՝ Արարատյան և Մշո, որոնք, պիտի կարծել, գրաբարյան շրջանի Այրարատյան և Տարոնի խոսակցական հայերենների հետագա զարգացումներն են) շնչեղ ձայնեղ հպականներին վերագրվի հազարամյակների հնություն, բայց հիմքեր չկան ասելու, որ հին հայերենում դրանք եղել են առանձին հնչույթներ[45]: Այս դեպքում ևս պիտի ընդունենք մաշտոցյան այբուբենի հնչույթաբանորեն կատարյալ լինելու մասին տեսակետը[46] և ավելացնենք. եթե շնչեղ ձայնեղ հպականները հին հայերենում ունենային հնչույթային (= իմաստատարբերակիչ) արժեք, Մաշտոցը չէր կարող դա չզգալ և համապատասխան գրեր չստեղծել: Հակառակ դեպքում նրա ստեղծած գրային համակարգը պարզապես թերի կլիներ և գործածության համար ոչ պիտանի, ինչպիսին որ էին դանիելյան նշանագրերը[47]: Ըստ ամենայնի, հին հայերենում (պիտի կարծել՝ նաև արդի բարբառներում) էական չէր, օրինակ՝ «դուռն» բառը կարտասանվեր [*դ*ուռը]՞, թե՞ [*դ*ʰուռը], դրանից բառիմաստի փոփոխություն տեղի չէր ունենա, ուստի հպականների շնչեղ արտաբերության համար լրացուցիչ տառեր հորինելու անհրաժեշտություն չկար:

Հետևաբար, օրինաչափ է կարծել, որ հին հայերենում եղել է ձայնեղ հպականների մեկ հնչույթային կարգ՝ <Բ([h])>, <Գ([h])>, <Դ([h])>, շնչեղ (հմմտ. *բʰ, գʰ, դʰ*) և ոչ շնչեղ (հմմտ. *բ, գ, դ*) ենթահնչույթային տարբերակներով (= ենթակարգերով):

---

[44] Տե՛ս **Վարդան Պետրոսյան**, Հպական բաղաձայնների հնդեվրոպական և հայկական համակարգերը // Հայագիտության հարցեր, Եր., 2014, № 2, էջ 121-139:

[45] Հմմտ. **Է. Բ. Աղայան**, Գրաբարի քերականություն, էջ 148, **Գ. Բ. Ջահուկյան**, Հայ բարբառագիտության … , էջ 263:

[46] Տե՛ս **Է. Բ. Աղայան**, նշվ. աշխ., էջ 335:

[47] Հմմտ. «Իսկ իբրեւ ի վերայ հասեալ, թէ չեն բաւական նշանագիրքն՝ ողջ ածել զսիւղոբայս զկապս հայերէն լեզուին … » (**Կորյուն**, Վարք Մաշտոցի, Եր., 1981, էջ 94): Տե՛ս նաև՝ **Հրաչյա Աճառյան**, Հայոց գրերը, Եր., 1984, էջ 436-440, **Հ. Մարկվարտ**, Հայոց այբուբենի ծագումը և Մաշտոցի կենսագրությունը // «Մեսրոպ Մաշտոց», Եր., 1962, էջ 117-180, **Մանուկ Աբեղյան**, Մեսրոպ Մաշտոցը և հայ գրի ու գրականության սկիզբը // «Մեսրոպ Մաշտոց», էջ 248-257, **Է. Բ. Աղայան**, Մեսրոպ Մաշտոց, Եր., 1986, էջ 30-40:

Բանալի բառեր - *շնչեղ ձայնեղ, հպական բաղաձայն, հին հայերեն, հնչույթային կարգավիճակ, ենթահնչույթ, տարբերակիչ հատկանիշ*

ВАРДАН ПЕТРОСЯН – ***Древнеармянские звонкие смычные (синхронический аспект).*** – Основываясь преимущественно на наличии в некоторых современных армянских диалектах (новоджульфийском, мушском, араратском, севастийском, новонахиджеванском) звонких смычных придыхательных, в начале минувшего века ряд арменоведов (Г. Ачарян, Х. Педерсен, А. Мейе) сочли, что в древнеармянском языке имелись придыхательные звонкие смычные. Следущее поколение языковедов (А. Гарибян, Э. Агаян, Г. Джаукян, Э. Бенвенист, Г. Фогт, В. Ален, Вяч. Иванов) также поднимали этот вопрос. Анализ показывает, что придыхательные звонкие названных диалектов в настоящее время ни по одной из фонологических теорий (функциональной, дистрибутивной, двухступенчатой) не могут считаться фонемами, а являются позиционными вариантами звонких смычных преимущественно в начале слова, в позиции, предшествующей гласному. Очевидно, в древнеармянском языке также существовал один фонологический ряд звонких смычных с придыхательными и непридыхательными субфонемами. Следовательно, нет основания считать придыхательность в древнеармянском языке фонологическим (= дифференциальным) признаком.

Ключевые слова: *придыхательный звонкий, смычный согласный, древнеармянский язык, фонемное положение, субфонема, дифференциальный признак*

VARDAN PETROSYAN – ***Old Armenian Voiced Occlusives (synchronic concept).*** – Early in the 20th century, taking into consideration the existence of the voiced occlusives in some Modern Armenian dialects (the dialects of Nor Jugha, Moush, Sebastia, Ararat, Nor Nakhichevan, etc.), various Armenologists (H. Acharyan, H. Pedersen, A, Meye) expressed their views on the aspirated nature of the voiced occlusives of Old Armenian.

In the mid-20th century, this question was further considered, though with conflicting opinions, by the next generation of Armenologists (A. Gharibyan, E. Aghayan, G. Jahukyan, E. Benveniste, H. Fogt, V. Alen, Vyach. Ivanov, and others). The research indicates that the abovementioned aspirated voiced sounds of Modern Armenian cannot be regarded as phonemes by the principles of any of the known phonemic theories (functional, distributive, double graded, etc.). They are the practical variants of the voiced occlusives, i.e. they are sub-phonemes and appear predominantly at the beginning of the word preceding a vowel. Apparently, Old Armenian also possessed one phonemic order of voiced occlusives with aspirated and non-aspirated sub-categories. (=sub-phonemes). Therefore, there are no grounds to consider the aspirated nature in Old Armenian a phonemic feature.

Key words: *aspirated voiced sounds, occlusives, Old Armenian, phonemic status, sub-phoneme, a distinguishing feature*

Ներկայացվել է՝ 15.01.2019, գրախոսվել է՝ 13.02.2019, ընդունվել է տպագրության՝ 21.02.2019